

Ի

Լեւոնի հիմակուան գերեզմանը



արիսի Մոնմարտըը թաղին մէջ բլուր մը կայ, որ կիշխէ ամբողջ քաղաքին վրայ: Այս բլուրը կը կոչուի Մոնմարտըը⁽¹⁾, որմէ իր անունն առած է թաղը: Գրիստոնէութեան առաջին դարերուն՝ Պարիսի եւ շրջակայ վայրերու կռուածքներն հոս կը բերէին նահատակելու համար իրենց քրիստոնեայ զոհերը: 273 թուին կատարուած զոհերուն մէջ

կը գտնուէին սուրբն Դիոնիսիոս ու իր երկու ընկերները: Նահատակութեան ներկայ գտնուող բարեպաշտ կին մը ժողովելով մարտիրոսներու մարմինները, տարաւ թաղեց իր սեպհական գեանին մէջ: Եւ երբ քրիստոնէութիւնը զօրացաւ, այնտեղ՝ նահատակներու գերեզմանին վրայ տաճար մը կանգնուեցաւ, որ Ե-րբ դարուն վերջերը սրբուհի Ժընովիէվի կողմէ նորոգուեցաւ: Իսկ 626 թուին Դագորեր Ա Ֆրանսայի թագաւորը կրկին նորոգելով զայն՝ հիմնարկեց արքայաբանը: Նոր հիմնուած աւանն ալ նահատակ սուրբին անունով կոչուեցաւ՝ Ս. Դիոնիսիոս կամ Սէն-Դընի, որ Պարիսի հիւսիսակողմը՝ 5 հազարամետր հեռաւորութեամբ առանձին վաճառաշահ քաղաք մըն է հիմա:

Աւանդութիւնը կըսէ, թէ Դագորեր իր հիմնած արքայաբանի հանդիսաւոր օծման համար մեծ պատրաստութիւններ տեսած էր: Երբ որոշուած օրն հասաւ, Քրիստոս՝ հրեշտակներու ու երկնային սրբերու երամով շրջապատուած՝ անձամբ եկաւ օծել իրեն համար արիւն թափած երեք նահատակներու եկեղեցին: Ժողովրդային աւանդութիւնը ցոյց կուտայ նաեւ այն անկիւնն ուսկից մտաւ Քրիստոս: Ահա այս անկիւնը դրուած է Լեւոնի արդի շիրիմը ⁽²⁾: Արքայաբանի այս բաժինը կը կոչուի՝ Ս. Երրորդութեան տաճար, ուր կը գտնուին նաեւ 1346-ին վախճանած Ալանսոնի կոմս Charles de Valois-ի եւ իր կնոջ՝ Marie d'Espagne-ի (+ 1379) շիրիմները, որոնք բերուած են ուրիշ եկեղեցիէ մը:

(1) Ոմանք այս անունը կստգաբանեն՝ Mont de Mars == լեռ Արեսի. եւ հիշատակուող կը գտնուի Արես աստուծոյ մէկ մեհեանը, որուն աւերակներուն վրայ շինուած է Ս. Պետրոսի բազմադարեան եկեղեցին, որ դեռ կանգուն է:

(2) Guilhaemy, *L'Abbaye de Saint-Denis et ses Tombeaux*, br. 2 եւ 58: